ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Մի անգամ գերմանական ոստիկանությունը ԴՆԹ-ի նմուշ է վերցրել ոս-կերչական խանութի կողոպտման ժամանակ: Նմուշները ցույց տվեցին, որ ամենայն հավանականությամբ կողոպուտը կատարել են Խասան և Աբբաս եղբայրները: Սակայն եղբայրները, որ երկվորյակ էին, հերքում էին իրենց մասնակցության փաստը: Ոստիկանությունը գիտեր, որ հանցանքը կատա-րել է նրանցից մեկը: Բայց ո՞րը: Այս բանը հնարավոր չեղավ բացահայտել, քանի որ եղբայրների ԴՆԹ-երը նույնական էին: Իսկ Գերմանիայի օրենքով կասկածյալներին չեն կարող անորոշ ժամանակ պահել մեկուսացված: Այդ-պես՝ ոստիկանությունը ուրիշ ընտրություն չուներ, քան բաց թողնել կասկած-յալներին: